ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2021 թվականի N 1372 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 692-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 692-Ա որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2021 թվականի N 692-Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել և ամրացնել՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ Պետական գույքի կառավարման կոմիտե)՝ հետագայում այլ գերատեսչության ամրացնելու կամ դրանք օտարելու նպատակով՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նախարարության միասնական սոցիալական ծառայությանը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացված տրանսպորտային միջոցները հետ վերցնել և ամրացնել ծառայությանը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) մինչև 2021 թվականի հոկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման N 1 հավելվածի ցանկում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների կատարումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 1 հավելվածի ցանկում նշված տրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով նախարարության միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և ծառայության պետին՝

1) մինչև 2021 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման N 2 հավելվածի

ցանկում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների կատարումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 2 հավելվածի ցանկում նշված տրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով ծառայության միջոցների հաշվին:

5. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և ծառայության պետին՝

1) մինչև 2021 թվականի հոկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման N 3 հավելվածի ցանկում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների կատարումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 3 հավելվածի ցանկում նշված տրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով ծառայության միջոցների հաշվին:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 29-ի N 692 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

(դրամ)

N/N ը/կ	Մակնիշը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Նույնականացման համարը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռա-յին արժեքը	Վերագնա-հատված արժեքը
1.	ВАЗ-21074-120-21 (ՎԱԶ -21074-120-21)	003OO08	2005 թ.	XTA21074052201436	2622000	0	63951
2.	ВАЗ -21074-120-21 (ՎԱԶ -21074-120-21)	004OO08	2005 թ.	XTA21074052201160	2622000	0	63951
3.	ВАЗ-21074-120-21 (ՎԱԶ -21074-120-21)	013OO08	2005 թ.	XTA21074052216254	2622000	0	63951
4.	ВАЗ 21074-120-21 (Վազ 21074-120-21)	0120008	2005 թ.	XTA 21074052219875	2622000	0	63951
5.	ГАЗ 31105-120 (ԳԱԶ 31105-120)	087LL11	2006 թ.	X9631105061343803	4240000	0	103570
6.	ВАЗ-21213 (ՎԱԶ-21213)	519OU64	2001 թ.	XTA21213021605253	3005100	0	61329
7.	ВАЗ 21074-120-21 (Վազ 21074-120-21)	002 00 08	2005 թ.	XTA 21074052201389	2622000	0	63951
8.	ВАЗ 21074-120-21	017 00 08	2005 թ.	XTA 21074052216139	2622000	0	63951

	(Վազ 21074-120-21)						
9.	ВАЗ-21214 (ՎԱԶ-21214)	080OO08	2005 թ.	XTA21214051708908	4047000	0	98707
10.	Renault Fluence (Ռենո Ֆլյուենս)	006SS07	2012 թ.	VF1LZBROA47108373	9100000	1456000	-

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 29-ի N 692 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

(դրամ)

N/N ը/կ	Մակնիշը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Նույնականացման համարը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռային (կամ վերագնահատված) արժեքը
1.	Mercedes Viano 3.2 (Մերսեդես Վիանո 3.2)	010 SS 07	2004 թ.	WDF63981323031633	4650000	2604000
2.	Ford Tranzit 150 (Ֆորդ Տրանզիտ 150)	020 SS 07	2016 թ.	1FMZK1CM8GKA94242	22268067	12470117.52

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 29-ի N 692 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

(դրամ)

N/N ը/կ	Մակնիշը	Պետական համարանիշը	Թողարկման տարեթիվը	Նույնականացման համարը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռային արժեքը
1.	RENAULT LOGAN 1.4 (ՌԵՆՈ ԼՈԳԱՆ 1.4)	147BB01	2015 թ.	X7LLSRB2HFH750765	5280000	2745600
2.	RENAULT LOGAN 1.4 (ՌԵՆՈ ԼՈԳԱՆ 1.4)	190BB01	2015թ.	X7LLSRB2HFH750742	5280000	2112000
3.	RENAULT LOGAN 1.4 (ՌԵՆՈ ԼՈԳԱՆ 1.4)	194BB01	2015թ.	X7LLSRB2HFH749166	5280000	2745600
4.	RENAULT LOGAN 1.4 (ՌԵՆՈ ԼՈԳԱՆ 1.4)	195BB01	2015թ.	X7LLSRB2HFH749246	5280000	2745600

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.08.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ